«Շատ կարևոր է աշխարհին հիշեցնել, որ մենք պատերազմ չենք սկսել»

Ըստ քաղաքագետի, Հայաստանի իշխանությունները պիտի դիմեն Մինսկի խմբի համանախագահներին, որպեսզի վերջիններս կարևոր պարտավորություն ստանձնեն: Այն է՝ երբ Ադրբեջանը հրաժարվի կատարել պայմանագրով իրեն վերապահված քայլերը, այդ պարագայում միակողմանի ճանաչեն Ղարաբաղի անկախությունը: Այս մեխանիզմը կիրառվել է Կոսովոյի պարագայում՝ Ախտիսաարիի պլանով:

Չորրորդ քայլով ակումբի հյուրն առաջարկում է փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծման հարցը ևս ներառել բանակցային գործընթացում: ***«Գաղտնիք չէ, որ այսօր կողմերի միջև վստահություն բացարձակ չկա: Այս մթնոլորտում նույնիսկ ամենաիդեալական ծրագիր իրականացնելը հնարավոր չէ»,-*** նշեց Ստեփան Գրիգորյանը՝ անցնելով հինգերորդ քայլին: ***«Հայաստանի իշխանական օղակները, դիվանագետները, պառլամենտը պիտի ակտիվ աշխատանքներ տանեն ղարաբաղյան հիմնախնդրի էությունը կրկին բարձրաձայնելու ուղղությամբ: Շատ կարևոր է աշխարհին հիշեցնել, որ մենք պատերազմ չենք սկսել, ուստի օկուպանտ լինել չենք կարող, քանի որ պատերազմ սկսողն է տարածքներն օկուպացնում»:***

Փոխզիջումային լուծումը, Ստեփան Գրիգորյանի վստահեցմամբ, միակ ճանապարհն է: ***«Առանց Ղարաբաղի՝ զիջումների մասին խոսելն անիմաստ է: Բայց մենք պետք է հայտարարենք, որ պատրաստ ենք քննարկելու ցանկացած տարբերակ: Օրինակ, ես հաճույքով Ֆիզուլիի գյուղերից մեկը կվերադարձնեի Ադրբեջանին՝ պահանջելով, որ ադրբեջանցի փախստականների հետ վերադառնան նաև ժամանակին այդ գյուղում ապրող շուրջ հինգ հայ ընտանիք»,-*** նկատեց բանախոսը:

Ինչ վերաբերում է եռանախագահների վերջին հայտարարության մեջ առկա «օկուպացված տարածքներ» արտահայտությանը, վերլուծական կենտրոնի ղեկավարը փաստեց. ***«Ավելի ճիշտ տարբերակը ռուսականն է: Մեր տարածաշրջանում Ռուսաստանի ասածն ավելի է անցնում: Կարող են արաբերենն էլ համարել պաշտոնական տեքստ, բայց աշխատելու է լիովին ուրիշ տեքստ: Այնուամենայնիվ, մենք չպետք է թույլ տայինք, որ այդ բառը ներառվեր հայտարարության տեքստում»:***

Քաղաքագետի կարծիքով՝ չնայած ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնի այցն այնքան էլ օգտակար չէր տարածաշրջանի համար, բայց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման առնչությամբ հստակ գնահատականներ հնչեցին. Հայաստանը կառուցողական է, Թուրքիան՝ ոչ: Ավելին, բանախոսը համոզված է, որ նույնիսկ այսօր արձանագրությունների վավերացումը ճիշտ քայլ կլիներ Հայաստանի կողմից: ***«Առանց վավերացնելու էլ ֆիքսվեց, որ մերժողը Թուրքիան է: Մեր դիվանագիտության մեծ հաջողությունն այն է, որ միջազգային հանրությունն այս ամենը հենց այդպես էլ գնահատեց»,-*** շեշտեց քաղաքագետը՝ հավելելով, որ այս գործընթացի շնորհիվ Հայաստանի հանդեպ հետաքրքրությունն աշխարհում մեծացավ:

Ռուզան ԽԱՉԱՏՐՅԱՆ